

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝
ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

<https://doi.org/10.59982/18294359-23.14.2-ra-06>

Ռուբեն Արմենի Բաղայան

հայցորդ

ՀՊՏՀ, ՄՏՀ ամբիոն

maxmarket119@gmail.com

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է ՕՈՒՆ արդյունավետությանը՝ որպես Հայաստանի տնտեսության զարգացման գրավական: Ըստ ՀՀ վիճակագրական տվյալների բազաների հիման վրա կատարված վերլուծությունների արդյունքների՝ սույն աշխատանքի շրջանակում կատարվել են համեմատական վերլուծություններ, վերհանվել առաջատար գործունեության ոլորտներն ըստ կատարված ներդրումների և տրվել է վերջիններիս դինամիկան հաշվետու ժամանակահատվածում:

Ներդրումները կարևոր դեր են խաղում աշխարհի երկրների տնտեսական զարգացման գործում, ապահովում են ՀՆԱ-ի աճ, դրական փոփոխություններ են կատարում ներքին սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ, ռեսուրսների գործարկման մեխանիզմներում և ձևավորում արտաքին քաղաքականություն: Արդյունավետ ներդրումային քաղաքականությունը հիմք է ստեղծում պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերի զարգացման, տնտեսության կառուցվածքի որակական վերափոխումների և երկրի որակյալ արտադրանքը միջազգային շուկայում պատշաճ ներկայացնելուն:

Կայուն տնտեսական աճ ապահովելու համար ՕՈՒՆ այն հիմնական գործոններից են, որոնք հիմք են դառնում աշխարհի երկրներում բարձրորակ տնտեսական զարգացման համար, ինչը նաև արտացոլում է երկրի ներդրումային միջավայրի բարենպաստ զարգացումը: Ներկայիս տնտեսական պայմաններում ներդրումային գործունեության ակտիվացման հիմնական մեխանիզմը արտադրական օբյեկտների տեխնիկական և տեխնոլոգիական նորացման արդիականացումն է և տնտեսական զարգացման ֆինանսավորման նպատակով մասնավոր, օտարերկրյա և ներքին ներդրողների ներգրավման պայմանների ստեղծումը:

Հիմնաբառեր. տնտեսական աճ, զուտ հոսքեր, համեմատություն, խթան, ներդրումային միջավայր:

Ներածություն

Ցանկացած տնտեսական համակարգում տնտեսական կայուն աճի և երկարաժամկետ տնտեսական զարգացման հիմքը կատարվող ներդրումներն են:

Հոդվածում հետազոտվող հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է արդի պայմաններում ՀՀ տնտեսությունում մեծածավալ ներդրումների ներգրավման անհրաժեշտությամբ: Այստեղ կարևոր դեր է խաղում ոչ այնքան ներդրումների ծավալը, որքան դրանք արդյունավետ օգտագործելու հնարավորությունն ու կարողությունը ինչպես հանրապետության տնտեսության զարգացման, այնպես էլ ներդրումների աճի բարձրացման համար [Бальцерович, Жоньца, 17-62]: Սույն գիտական աշխատանքի խնդիրն է ՕՈՒՆ արդյունավետ ներգրավման գործում պետության մասնակցության չափի վերաբերյալ հարցը գիտական ընդլայնված քննարկումների առարկա դարձնելը: Ինչպիսի՞ գործառույթներ պետք է կատարի պետությունը: Նպաստո՞ւմ է արդյոք պետության ներդրումների արդյունավետության աճին: Խոսքը պետության և ներդրումների ներգրավման արդյունավետ համադրության, նրանց միջև լավագույն հարաբերակցություն սահմանելու մասին է: Խնդիրն այն չէ, թե պետությունը տնտեսությունը միջամտի, թե ոչ, այլ պետական միջամտության ինչպիսի՞ գործիքներ ու ձևեր պետք է կիրառվեն և ինչ հնարավոր հետևանքներ դրանք կարող են ունենալ [Մարկոսյան, Հախվերդյան, 165]: Պետության և մասնավոր հատվածի համագործակցության վերախմաստավորումն արդի տնտեսության ձևավորման և համընդհանրացման հետևանքն ու տրամաբանական շարունակությունն է [Նազարյան, 27]:

Գիտական նորույթը հիմնավորվել է ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում, այն է՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանումը Հայաստանի տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից է, որի արդյունավետ ներգրավման գործում մեծ է պետության մասնակցության չափը: Ներդրումների արդյունավետությունն ավելացնելու, լրացուցիչ խթաններ ստեղծելու ուղղությամբ ձևավորվել են հստակ առաջարկություններ՝ պետական միջամտության այնպիսի գործիքներ, որոնց կիրառումը կնպաստի ՕՈՒՆ արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտությունում կիրառվել է տնտեսական և վիճակագրական վերլուծության մեթոդը Հայաստանի տնտեսությունում օտարերկրյա ուղղակի ներդրումային գործընթացների միտումների, դինամիկայի և առանձնահատկությունների վերլուծության առումով:

Միջազգային շուկայում իր դիրքերն ամրապնդելու և երկրի ներդրումային իմիջը բարելավելու համար ՀՀ կառավարությունն աշխատում է ապահովել սոցիալ-տնտեսական զարգացման աճը, քաղաքական կայունության պայմանները և պայմանների ձևավորումը, օտարերկրյա ներդրողների շահերի պաշտպանությունը:

ՀՀ-ը ներդրումների նկատմամբ հայտարարել և իրականացնում է «Բաց դռների» քաղաքականություն և ՀՀ ներդրումային դաշտը համարվում է ԱՊՀ երկրների ամենաբացերից մեկը: Հայաստանում օտարերկրյա ներդրումները պաշտպանված են «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով [«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք]: Նպատակ ունենալով խթանել և աջակցել օտարերկրյա

ներդրողներին ու գործարարներին, ինչպես նաև ստեղծել նպաստավոր պայմաններ նրանց գործունեության համար ՀՀ կառավարությունն առաջարկում է օժանդակության լայն գործիքակազմ [Ներդրում Հայաստանում]: Վերջին տարիներին պետության ակտիվ մասնակցությամբ ներդրումների խթանման ուղղությամբ կարևոր քայլ էր արժեթղթերի շուկայի զարգացումը, որն իրավական հիմքեր է ստեղծում տնտեսության առավել արդյունավետ ճյուղեր կապիտալի հոսքի համար, որոնք իրենց արդյունավետությունն արդեն իսկ ապացուցել են և լրացուցիչ ներդրումների կարիք են զգում հետագա ընդլայնման համար [Բոստանջյան, Թոփլաղալցյան, 22]:

Ներդրումների արդյունավետությունը որոշելու մոտեցումները կարելի է որոշել ըստ ներդրումների վերջնական նպատակի կամ արդյունավետության, ստացված տվյալների, ծախսերի որոշման մոտեցման, տնտեսական համակարգի մակարդակի՝ հաշվի առնելով վերջնական նպատակը, ժամանակի գործոնը, գնահատման ձևը: Ըստ ներդրումների գնահատման արդյունքների՝ առանձնանում են արդյունավետության հետևյալ տեսակները.

- ֆինանսական արդյունավետություն՝ հաշվի առնելով ներդրումային գործունեության ֆինանսական հետևանքները դրա անմիջական մասնակիցների համար (շահույթ, եկամուտ, շահութաբերություն),

- բյուջետային արդյունավետություն, որն արտացոլում է ներդրումային գործունեության ֆինանսական հետևանքները ազգային, տարածաշրջանային կամ տեղական բյուջեների համար,

- բնապահպանական արդյունավետություն՝ որն արտացոլում է ներդրումային գործունեության հետևանքները բնապահպանական իրավիճակի բարելավման առումով,

- սոցիալական արդյունավետություն, որն արտացոլում է ներդրումային գործունեության սոցիալական հետևանքները,

- արտադրության արդյունավետություն՝ արտացոլելով ներդրումային գործունեության հետևանքները բնական արտադրության ցուցանիշների դինամիկայի վրա,

- տնտեսական արդյունավետություն՝ թույլ է տալիս չափել ծախսերը և հաշվել արդյունքները [Дасковский, Киселев, 43-56]:


Խոսելով ներդրումների ներգրավման, գործարար միջավայրի զարգացման, կառավարության ներդրումային քաղաքականության և ներդրումներին աջակցող կառույցների գործունեության մասին՝ նախ և առաջ անհրաժեշտ է իրականացնել ներդրումային հոսքերի վիճակագրության վերլուծություն և ներկայացնել առկա միտումները:

Սույն ուսումնասիրության շրջանակում, հաշվետու՝ 2014-2022թթ. ժամանակահատվածի համար, վերլուծվում և ներկայացվում է օտարերկրյա և ուղղակի ներդրումների դինամիկան՝ ըստ տարիների և տնտեսության առանձին ճյուղերում կատարված ներդրումների: Ըստ էության, արդյունքների դինամիկան ցույց տալու

միջոցով, ուսումնասիրությունն ուղղված է ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատմանը: Համեմատական վերլուծության տեսքով դիտարկվել են երկրի տնտեսությունում ՕՈՒՆ զուտ հոսքերը :

Այսպես, ըստ ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի առ 2014-2022թթ. տվյալների [ՀՀ վիճակագրական տվյալների բազա], 2014թ.-ին օտարերկրյա ներդրումների ծավալը հանրապետությունում հասել է իր գագաթնակետին և կազմել 218924,5 մլն դրամ, իսկ ուղղակի ներդրումները կազմել են 162725,2 մլն դրամ (տե՛ս Գծանկար 1):

Գծանկար 1.



Օտարերկրյա և ուղղակի ներդրումների զուտ հոսքերն առ 2014-2022թթ. (մլն դրամ)


Հետագա տարիներին ներդրումները նվազել են որոշակի տատանումներով՝ 2017թ.-ին օտարերկրյա ներդրումներն կազմել են 59190.5 մլն դրամ, իսկ ուղղակի ներդրումները՝ 94197.9 մլն դրամ:

Հաջորդ երկու տարիներին՝ 2018 և 2019թթ., օտարերկրյա ներդրումները հաջորդաբար կազմել են 33989.0 և 98442.6 մլն դրամ: 2019 և 2020թթ. Հայաստանում ուղղակի ներդրումները գրանցել են 2014 թվականից ի վեր ամենացածր մակարդակը՝ 2020թ.-ին Հայաստանում ուղղակի ներդրումները կազմել են ընդամենը -43200.9 մլն դրամ, ինչը նախորդ 3 տարիների համեմատ ավելի քան 2 անգամ պակաս է: 2021 և 2022թթ. օտարերկրյա և ուղղակի ներդրումների կտրուկ աճ է գրանցվել, իսկ ուղղակի ներդրումները 2014 թվականից ի վեր 2022թ.-ին գրանցել են աննախադեպ ցուցանիշ՝ կազմելով 181825.2 մլն դրամ:

Հայաստանը լինելով փոքր ներքին շուկա ունեցող և ռեսուրսներով աղքատ երկիր՝ պոտենցիալ հետաքրքրություն է ներկայացնում հիմնականում արդյունավետության շարժառիթ և ռազմավարական ակտիվներ ձեռքբերելուն ուղղված օտարերկրյա

ուղղակի ներդրումների համար, հետևաբար՝ ուսումնասիրվել և վերլուծվել են ուղղակի ներդրումների զուտ հոսքերն ըստ գործունեության ոլորտների (տե՛ս Գծանկար 2):

Գծանկար 2.




Օդարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերն ըստ գործունեության տեսակների առ 2014-2022թթ. (մլն դրամ)

Ուսումնասիրելով ՕՈՒՆ զուտ հոսքերի դինամիկան հաշվետու ժամանակաշրջանում՝ հարկ է նշել, որ ՕՈՒՆ զուտ ներհոսքը կազմել է շուրջ 561557.5 մլն դրամ, որի մոտ կեսը բաժին է ընկնում «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն» ոլորտներին: Ցանկը գլխավորում են 15 գործունեության ոլորտներ, որոնցից 5 առաջատարները կլանել են ամբողջ ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքի 77 %-ը, այսինքն՝ 432399.3 մլն դրամ: Այստեղ կարևոր դեր է խաղում ոչ այնքան ներդրումների ծավալը, որքան դրանք արդյունավետ օգտագործելու հնարավորությունն ու կարողությունը ինչպես հանրապետության տնտեսության զարգացման, այնպես էլ ներդրումների ծավալի մեծացման համար:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՕՈՒՆ ցանկը գլխավորող հինգ գործունեության ոլորտների զուտ հուսքերի դինամիկան ցույց է տալիս ներդրումների ծավալների կառուցվածքում զգալի տատանումները (տե՛ս Գծանկար 3):

Գծանկար 3.




ՕՈՒՆ-ների զուտ հուսքերի դինամիկան ըստ առաջատար ոլորտների 2014-2022թթ.

«Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն» ոլորտում ներդրումների ծավալի աճ է նկատվում սկսած 2015թ.-ից, որը, գրանցելով աննախադեպ բարձր ցուցանիշ 2017թ.-ին, աստիճանաբար նվազում է հաջորդող տարիներին: Միաժամանակ ներդրումային ծավալների կտրուկ նվազում է նկատվում «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում:

Վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների համաձայն՝ 2021 և 2022թթ. ՕՈՒՆ-երի ներհուսքը Հայաստան աճել է նախորդ տարիների համեմատ և համապատասխանաբար կազմել 129194.6 և 181825.2 մլն դրամ (տե՛ս Գծանկար 4):

Գծանկար 4.



ՕՈՒՆ-երի ներհուսքը Հայաստան ըստ գործունեության ոլորտների առ 2021-2022թթ. (մլն դր.)

Ի դեպ, 2022 թ.-ին ՕՈՒՆ-երի գրանցած ցուցանիշն աննախադեպ է 2014 թվականից ի վեր, որն ըստ վերլուծած տվյալների բաշխվել է հետևյալ կերպ՝ 2021թ. առաջատար 3 ոլորտներն ընդգրկել են «Այլ գործունեություն», «Անշարժ գույքի հետ կապված գործունեություն» և «Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն», իսկ 2022թ.-ին՝ «Մետաղական հանքաքարի արդյունահանում», «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «Անշարժ գույքի հետ կապված գործունեություն» ոլորտները:

Եզրակացություն

Ամփոփելով և վերլուծելով վերը շարադրվածը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- ՕՈՒՆ-ների զուտ հոսքերի և պաշարների դիտարկումն ի ցույց է դնում այն իրողությունը, որ օտարերկրյա ներդրումների համար ավելի գրավիչ են հայաստանյան տնտեսության ռեսուրսային մրցունակությունը պայմանավորող ուղղությունները, մինչդեռ արդյունավետությամբ, կամ առավել ևս, գիտական, ինովացիոն գործունեությունը պայմանավորված մրցակցային առավելությունների շոշափելի տեղաշարժ չի արձանագրվել, ինչի վկայությունը գիտության, բարձր տեխնոլոգիական հենք ունեցող ուղղություններում ՕՈՒՆ-ների պաշարների և զուտ հոսքերի համեմատաբար ցածր մակարդակն է:
- Երկրի տնտեսության զարգացման նախորդ փուլերում թերևս ամենաարդիականը հնարավորինս շատ ներդրումներ ներգրավելն էր, սակայն նոր իրողություններում գնալով ուժեղանում է հարկային խթանների սահմանման անհրաժեշտությունը, որի ապահովման հիմնական չափանիշը պետք է լինի արդյունավետությունը: Ուստի անհրաժեշտ է վերանայել հարկային խրախուսման գործող համակարգը, որն ավելի շատ ուղղված է ներդրումների ծավալի ավելացմանը, այլ ոչ թե արդյունավետությանը:
- Ներդրումների խթանումը Հայաստանի տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից է, ուստի անհրաժեշտ է ստեղծել լրացուցիչ խթաններ օտարերկրյա ներդրողների համար՝ ավելացնելու երկրի ներդրումների արդյունավետությունն՝ ուղղված զբաղվածության ավելացմանը, բարենպաստ ներդրումային և բիզնես միջավայրի ստեղծմանը, կարգավորող դաշտի թափանցիկության բարձրացմանը և կայուն տնտեսական աճին:

Ընդհանուր առմամբ, ներդրումային միջավայրը բարելավելու և ներդրումները խթանելու համար ՀՀ կառավարությանն առաջարկվում է ձեռնարկել հետևյալ առաջնահերթ քայլերը.

- նոր ՕՈՒՆ-ի ներգրավում, ներդրողների հետ ամուր կապերի հաստատում՝ որպես Հայաստանում նրանց առաջնային գործընկեր,

- ներդրումներ իրականացնելու համար պետական մարմինների կողմից աջակցություն անհրաժեշտ բոլոր գործընթացներում,
- ներդրումների իրականացման ընթացքում առաջացող խնդիրներին օպերատիվ արձագանքման ապահովում,
- հավանական ներդրողներին ներդրումային ծրագրերի տրամադրում՝ ըստ վերջիններիս հետաքրքրությունների շրջանակի,
- հաշվի առնելով օտարերկրյա ուղղակի ներդրումների ներկայիս միտումները՝ նպաստել գիտելիքատար, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտներում ներդրումների կշռի աստիճանաբար աճին, քայլեր ձեռնարկել էապես փոխելու երկրի մրցակցային առավելությունների կառուցվածքը,
- բոլոր ներդրողների համար տնտեսական գործունեության համար հավասար մրցակցային պայմանների ստեղծում,
- ներդրումային նախագծերի իրականացման ընթացքում ներդրողների շահերն ու իրավունքները պաշտպանելու արդյունավետ օրենսդրական և գործնական մեխանիզմների ներդրում,
- սփյուռքի հետ առավել նպատակային և ակտիվ համագործակցության իրականացում՝ փոխվստահության և շահավետ միջավայրի ձևավորման միջոցով,
- օտարերկրյա չափանիշներին համապատասխանող ապահովագրական համակարգի ձևավորում՝ ներդրումները հնարավոր ներդրումային ռիսկերից պաշտպանելու նպատակով:

Գրականության ցանկ

1. **Բոստանջյան Վ., Թոփլաղալցյան Ա.**, «Ներդրումային քաղաքականության միջազգային փորձը, գիտական հոդված, Այլընտրանք եռամսյա գիտական հանդես, 2017 (4), էջ 22:
2. **Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ.**, Կորպորատիվ կառավարում. ակնկալիքներ և իրականություն, մենագրություն, Եր., «Տիգրան Մեծ», 2003, էջ 165:
3. **Նազարյան Գ.**, Պետության և միջազգային գործարարության համագործակցության հարցի շուրջ, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Երևան, 2010, 3(21), էջ 27:
4. **Бальцерович Л., Жоньца А.** Экономический рост: значение, различия, методы исследования // Загадки экономического роста. Движущие силы и кризисы – сравнительный анализ. М.: Мысль, 2012. С. 17–62.
5. **Дасковский В.Б., Киселев В.Б.** Совершенствование оценки эффективности инвестиций // Экономист. 2009. № 1. С. 43–56.
6. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք, (20 սեպտեմբերի 2023թ.), www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34872

7. ՀՀ վիճակագրական տվյալների բազա, (20 սեպտեմբերի 2023թ.), <https://armstat.am/file/doc/99532178.xls>
8. Ներդրում Հայաստանում, (20 սեպտեմբերի 2023թ.), <https://un.mfa.am/hy/invest/>

**EFFICIENCY OF FOREIGN INVESTMENTS BY TYPES OF ACTIVITY AS A
GUARANTEE FOR THE DEVELOPMENT OF ARMENIA'S ECONOMY**

Ruben Badalyan

Researcher

ASUE, Chair of International Economic Relations

maxmarket119@gmail.com

Abstract

The article is devoted to the effectiveness of foreign investments according to the types of activities as a guarantee of the development of the Armenian economy. According to the results of the analysis based on RA statistical databases, within the framework of this work, comparative analyses were made, the leading activity areas according to the investments made were highlighted, and their dynamics during the reporting period were given. Investments play an important role in the economic development of countries around the world, ensure the growth of GDP, make positive changes in internal socio-economic policy, mechanisms of resource utilization, and form foreign policy. An effective investment policy creates a basis for the development of branches of strategic importance for the state, qualitative transformations of the structure of the economy, and proper representation of the country's quality products on the international market.

To ensure stable economic growth, FDI is one of the main factors that become the basis for high-quality economic development in countries around the world, which also reflects the favorable development of the country's investment environment. In the current economic conditions, the main mechanism for the activation of investment activities is the modernization and technological renewal of production facilities and the creation of conditions for attracting private, foreign, and domestic investors for the purpose of financing economic development.

Keywords: Economic growth, net flows, comparison, stimulus, investment environment.

Ներկայացվել է՝ 03.10.2023թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 20.11.2023թ.